ՎՈՐՈՎԱՅՆԱՏԻՖԻ ԲԱՅԻԼԱԿԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1940

616.9
Ո-40

16.07.2013 ՊԱՅՔԱՐԵՑԵՔ ՎԱՐԱԿԻՉ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

ՎՈՐՈՎԱՅՆԱՏԻՓԻ ԲԱՑԻԼԱԿԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վորովայնատիֆի կամ պարատիֆի նույնիսկ ա-մենաթեթև ձևով հիվանդացած ու առողջացած, իսկ յերբեմն էլ չհիվանդացած, բայց այդպիսի հիվանդ-ների հետ մերձ շփված մարդիկ, իրենց կղանքի ու մեզի մեջ մեծ քանակությամբ միկրոբներ— վորո-վայնատիֆի և պարատիֆի հարուցիչներ են պարու-նակում: Այդպիսի մարդիկ բացիլակիրներ են կոչ-վում): Նրանք իրենց մեջ վորովայնատիֆի վիրակ են պահում: Առողջանալուց 3 ամիս անցնելուց հետո բացիլակիրների մեծ մասը դադարում է միկրոբներ արտադրելուց, սակայն վորովայնատիֆի կամ պարա-տիֆի տարածների 3—5 %-ը մոտ բացիլակրությունը չարունակվում է շատ ամիսներ և նույնիսկ տարի-ներ: Յերկարատև կրողության դեպքում միկրոբները պահպանվում են լեղապարկում և այնտեղից ժամա-նակ առ ժամանակ մեծ քանակությամբ ընկնում են աղիների ու արյան մեջ, իսկ վերջիններիս միջոցով յերիկամների մեջ, այնուհետև արտադրվում կղանքի ու մեզի հետ: Յերկարատև կրողությունը, վորպես կանոն, լինում է միայն վորովայնատիֆի հիվանդու-թյունը տարածների մոտ:*

Վորովայնատիֆի և պարատիֆի միկրոբներ կը-րողը չպետք է աշխատի մննդի հիմնարկներում ու ձեռնարկություններում՝ լինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական ջրմուղում, ջուր տեղափոխելու

*) Տվյալ դեպքում բացիլը նույնն է լինչ վոր միկրոբը:

9387
40

30 JUL 2010

գործում և մանկական հիմնարկներում մինչև այն ժամանակ, յերբ կհաստատվի, վոր նրա բացիլակրու-թյունը դադարել է: Բացիլակիրների աշխատանքն այդպիսի հիմնարկներում (ձեռնարկություններում) նրա համար էլ արգելվում, վոր նրանք չփում ունե-նալով սննդամթերքների, խմելու ջրի և յերեխաների առողջ գործածության առարկաների հետ, նրանց միջոցով կարող են վարակել մեծ թվով մարդկանց և տիֆի համաճարակ առաջացնել:

Յեթե կրողությունը մի քանի ամսվա ընթաց-քում չի դադարում (յերկարատև կրողություն), այդ-պիսի մարդուն անհրաժեշտ է փոխել իր պրոֆեսիան և այնպիսի աշխատանք գտնել, վորը պարենամթեր-ների կամ խմելու ջրի հետ չփվել չի պահանջում:

Բացիլակիրը պետք է հիշի, վոր նա կարող է վորովայնատիֆի տարածել, այդ պատճառով թե կեն-ցաղում և թե աշխատանքի մեջ նա պետք է խստու-թյամբ պահպանի հետևյալ կանոնները:

1) Զգեղտոտել ու չմրոտել վորտեղ պատահի, դրա համար ոգտվել զուգարանից, ըստ հնարավորության միևնույն զուգարանից, կատարելով այնտեղ սեռատ-մատիկ դեզինֆեկցիա, ամենից լավ է քլորակրի 10 տոկոսանոց լուծությամբ: Զուգարան գնալուց հե-տո անպայման լվանալ ձեռքերը:

2) Յեթե այդպիսի կրողը կերակուր է պատրաս-տում ընտանիքի համար, ապա ձեռնարկելով այդ աշ-խատանքին, նա անպայման և այն էլ շատ խնամքով և ուշադրությամբ պետք է լվանա իր ձեռները:

Այն ընտանիքներում, վորտեղ կովեր կան, ա-վելի լավ է վորովայնատիֆի հիվանդությունը տարա-ծին հեռացնել կթիլուց և կաթը մշակելուց, վորով-

7244

հետև կաթը վորովայնատիֆի միկրոբների բազմացման համար հրաշալի աննդարար միջավայր է:

Բացիլակրի ձեռքից կաթի մեջ ընկած միկրոբները հեշտությամբ կարող են վորովայնատիֆի տարածում առաջացնել: Իսկ յեթե բացիլակրին փոխադրինելու համար մարդ չկա, ապա անցնելով աչխատանքի, նա պետք է խնամքով լվանա ձեռները սապոնով և մաքուր գոգնոց հագնի:

Այդպիսի դեպքերում կաթը կարելի յե ուտելու համար դործածել միայն յեռացրած վիճակում:

Հիվանդության տարածը պետք է ունենա ուտելու առանձին ամանեղեն: Ուտելուց առաջ ձեռները լվանա սապոնով: Այն ամանը, վորից կերել է նա, պետք է լվանալ տաք ջրով մոխրաջրի հետ ու յեռացնել, կեղտոտ ջուրը լցնել զուգարանի կամ կեղտաջրի հորը:

Զուգարանի հատակը և պետքանոթները լվանալու համար ամենից լավ է ոգտվել քլորակրի լուծույթից 1 թեյի դդալ 1 լիտր ջրին:

О бациллоносителях брюшного тифа

Թարգմ.՝ Ավ. Շաթիրյան, Խմբագիր՝ բժ. Ս. Մկրտչյան
Տեխ. խմբ. Ի. Վարդանյան. Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան
Գլավլիտի լիազոր՝ Բ—1135. Պատվեր 352. Տիրաժ 4000

Հայպետհրատի տպարան, Յերևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0279507